ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/7798-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (Կ-992-24.12.2024-ԱՍ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար.

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի՝

1. 6-րդ հոդվածի 1-ին կետով գործող օրենքի 22-րդ հոդվածի 12-րդ և 16-րդ մասերի նոր խմբագրությամբ ներկայացված ձևակերպումները հստակեցնելու նպատակով առաջարկում ենք՝

ա. 12-րդ մասում՝ «առաջանալու օրվա» բառերից հետո լրացնել «դրությամբ» բառը,

բ. 16-րդ մասում՝ «6-րդ մասերով» բառերից հետո «սահմանված» բառը,

գ. 18-րդ մասում՝ «15.17-րդ» բառերը փոխարինել «15-17-րդ» բառերով:

2. 7-րդ հոդվածով՝ նոր խմբագրությամբ շարադրվող գործող օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասության «Վարձու աշխատողի» բառերից հետո լրացնել «կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի» բառերը, իսկ 2-րդ նախադասության «վարձու աշխատողի գործատուին» բառերից հետո լրացնել «կամ

ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին» բառերը:

3. 9-րդ հոդվածով՝ նոր խմբագրությամբ շարադրվող գործող օրենքի

ա. 26-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվող «զավակ» եզրույթի տարընկալումից խուսափելու նպատակով առաջարկում ենք կիրառել «չափահաս զավակ» բառերը:

բ. 27-րդ հոդվածի 7-րդ մասում «ճշտված հաշվարկի» բառերը փոխարինել «հաշվարկի (այդ թվում՝ ճշտված)» բառերով՝ այն համապատասխանեցնելով նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ձևակերպումներին:

4. 12-րդ հոդվածում առաջարկում ենք «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

«Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի՝

1. 1-ին հոդվածի 2-րդ մասով գործող օրենքի 23.1-ին հոդվածում նոր շարադրվող՝ 4.1-ին մասում «զավակ» եզրույթի տարընկալումից խուսափելու նպատակով առաջարկում ենք կիրառել «չափահաս զավակ» բառերը:

2. 2-րդ հոդվածի 5-րդ մասով՝ գործող օրենքի 23.2-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասի 5-րդ կետում բացակայում է կարգավորում օտարերկրյա քաղաքացու մասով, ինչով պայմանավորված առաջարկում ենք «հասցեով հաշվառում» բառերից հետո լրացնել՝ «, իսկ օտարերկրյա քաղաքացի՝ չաշխատող անձը հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ չի ունեցել Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում» բառերը:

3. 4-րդ հոդվածում առաջարկում ենք «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ